




ԼՐԱՏՈՒ

ՄԱՅԻՍ 2013



**«Շուկաներ
Մեղրիի համար»**



Հիմնական միջոցառումներ

Այս ամսվա ընթացքում «Էկոթեքնոլոջի» ՄՊԸ-ի հետ համատեղ «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը իրականացրել է «Aquasource» կենսաքայքայվող պոլիմերի փորձարկումը Մեղրիի տարածաշրջանում: Վերջինս իրենից ներկայացնում է օրգանական պոլիմեր, որը պահեստավորում է հողում առկա խոնավության և սննդարար նյութերի պաշարները և հետագայում աստիճանաբար դրանք փոխանցում է բույսին: Ծրագրի շրջանակներում տարածաշրջանի ֆերմերների հետ համապատասխան դասընթացներ անցկացնելուց հետո՝ մոտ 48 ծառերի մերձարմատային հատվածում ներարկումներ են իրականացվել: Մույն թվականի մայիսի 21-ին Սյունիքի մարզպետարանի հետ համատեղ Կապան քաղաքում կազմակերպվեց հանրային լսում, որի հիմնական նպատակն էր Մեղրիի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին, Մեղրի և Ագարակ քաղաքների քաղաքապետերին և տեղական ինքնակառավարման այլ մարմիններին ներկայացնել ծրագրի առաքելությունը, ուղղությունները, գործողությունների շրջանակը և գործունեության տարեկան պլանը: Միջոցառման ընթացքում մասնակիցների և ծրագրի ներկայացուցիչների միջև բավականին ակտիվ քննարկում ծավալվեց, որի արդյունքում, ի շնորհիվ հարցադրումների և արված առաջարկությունների, ծրագրի թիմը ավելի հստակեցրեց իր՝ տարածաշրջանում աշխատելու ուղղությունները: «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի շրջանակներում հունիսի 1-ին Ագարակ քաղաքում կազմակերպվեց նաև մի միջոցառում, որին մասնակցեցին Մեղրիի ֆերմերները և պոտենցիալ գնորդները: Միջոցառման հիմնական նպատակն էր քննարկել հանդիպման մասնակիցների՝ ֆերմերների և վերջնական սպառողների կողմից առաջարկվող հնարավոր համագործակցային ծրագրերի տեսլականները: Որպես հանդիպման արդյունք

հնարավոր եղավ հաստատել արտադրող-իրացնող փոխշահավետ համագործակցության հեռանկարային ծրագրեր, ինչից հաստատապես շահելու են ինչպես առաջնային արտադրողները, այնպես էլ պոտենցիալ գնորդները: Իսկ ահա հունիսի 4-ին ծրագրի թիմը հանդիպում անցկացրեց դոնոր կազմակերպությունների, տեղական կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց լուման ունեն տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացման գործընթացում: Հանդիպման նպատակն էր գործարկել «Գյուղատնտեսական հարթակ» Սյունիք մարզի համար: Պլատֆորմի հիմնական գաղափարն է բոլոր շահագրգիռ կողմերի հետ երկու ամիսը մեկ անգամ հանդիպումներ կազմակերպել, որոնց ընթացքում և քննարկել տարածաշրջանում գյուղատնտեսության զարգացման հետ կապված հարցեր: Վերջին երկու միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն կտրամադրվի լրատուի հաջորդ համարում:

Համագործակցության զարգացում և կրթական միջոցառումներ

Շարունակական ուսուցման, փորձի փոխանակման և Շվեյցարիայի միջազգային զարգացման գործակալության (SDC) կողմից ֆինանսավորվող այլ M4P ծրագրերի հետ համագործակցության հետագա զարգացման նպատակով՝ «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը մայիսին մասնակցեց Տաջիկստանում անցկացված «Փորձի փոխանակման միջոցառմանը», ինչպես նաև Թբիլիսիում կազմակերպված SDC Հարավկովկասյան ամենամյա կրթական միջոցառմանը: Մեկ այլ համագործակցության նախաձեռնության արդյունքում էլ, ՄԱԿ-ի «Զարգացման ծրագրի» հետ համատեղ Շվանիձոր գյուղում արդեն իսկ տեղադրվել է հակակարկտային ցանց: